

ցին Հայք հիմնարկած եւ շինած ըլլան, եւ իւր կարծիքն՝ որ ծանօթ ուսմանիացի պատմագէտ Քսէնոքոյէն բաւական զօրաւոր կերպով հերքուած է²⁰, կը հիմնէ Արճէշ²¹ անուան վրայ, եւ կ'ըսէ՝ թէ Հայք Վանայ ծովուն մէջ իրենց ունեցած համանուն քաղաքին յիշատակին համար՝ օտար երկրի մը մէջ իրենցմէ շինուած այս քաղաքն ալ նոյնպէս կոչեցին:

Նաեւ Լեմպէրկէն բաղմաթիւ հայ վաճառականներ եկան մերձաւոր Մոլտաւիա, եւ ի մասնաւորի՝ այն ժամանակի մայրաքաղաքին՝ Սուչավայի մէջ հաստատուեցան, ուր եռանդեամբ միջնավաճառութեան կը պարապէին²²:

Մոլտաւիոյ իշխանն Պետրոս Մուշաղ²³ (1375—1391), որ Լեհաց բարեկամ էր եւ անոնց Վլատիսլաւ թագաւորին հետ խնամացած, 1384ին Մոլտաւիոյ եւ Սուչավայի վաճառական Հայերն ի հաւատոյս Լեմպէրկի արեւելեան հայ եպիսկոպոսին իրաւարանութեան ենթարկեց²⁴:

Այս կարգադրութեան համեմատ կը գտնենք՝ որ Աւետիք անուամբ եպիսկոպոս մը Բոտոլլքի-կամենիցի եւ Մոլտաւիոյ Հայոց կ'առաջնորդէր* 1415—1445²⁵:

* Ստեփ. Ռոշքա (Ժմնկգր. 1398) կ'աւանդէ Տետեւեալն. «Տէր Յոհաննէս Առաջին Արքեպիսկոպոսն Լեօպոլսի Հայոց (քանզի յառաջ քան զսա, զայլ որ Արքեպիսկոպոս ոչ ուրեք կարացար գտանել): Սա ոչ միայն Լէնցոց, այլ եւ Պուլոտսնաց երկրի Հայոց Առաջնորդ էր, որպէս յայտ է ի մագաղաթնայ կոնդակէն կառուցման եկեղեցւոյն Սբ. Նիկողայոսի, որ ի Կամէնից, յորում այսպէս գրի: Տամ զզիրս զայս նահանգիս Առաջ-